

Յ Ե Յ Ե Ր

Վ Ե Պ

Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն Ց Յ Ի

(Շարունակութիւնն ¹⁾)

2.

ԱԿԱՄԱՅ ԻՌՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ.

Մարգարիտը ոչինչ նկատողութիւն չ'արեց իւր աղջկանն, երբ նա պատուական խոշոր սպիտակ ալանու դեղձերը չը կճպեց, ալանի չը շինեց, այլ գլխահան արեց, ճղճղոտեց և առաւ դնաց դէպի չնդիլը. ոչինչ բան չ'ասաց նա Սօնային, բայց ինքն իւր մէջ շատ զարմացաւ և կասկածի մէջ ընկաւ:

— Էհնց կարծես, իմ Սօնէն չըլնի, քշուածի պէս ա երևում, նա ու էսպէս բան բռնի՞, ալանու դեղձը ճղոտի, կամ էսպէս հաստ կլպտաի՞. կատես՝ եզան միջքից կաշու զօլեր ա հանած, ախտոս չե՞ն, էլ դեղձերու մն ի՞նչ ա մնացել, մնի մենձ բաժինը կլպի վրայ ա թողել: Զէ՛, երեխիս պինչը, հէնց իմանաս, մի մուխ ա մտել, էս առաջինը չի, քանի օր ա, մին տեսնում ես, կարմրեց՝ ալվան վարդ դառաւ, մին սփրթնեց՝ ոնց որ ջուհլակի հորից նոր կտրած կտաւ. կուրանա՛ն իմ աչքերը, ես էլ գլխահան եմ անում, բանի տեղ չեմ քցում, ըսկի չեմ հարցնում:

¹⁾ Տես «Մուրճ»-ի № 1.

Նա տեղիցը կանգնեց ու դէպի շնդիլը նայեց: Սօնան դեռ չնղլի վերայ էր:

— Փա՛ռք իմ Ատոճուն, երեխիս թևերն եկել են, թա՛ռւանա, թա՛ռւան. էս տարի գեղի ազափներն իրար գլուխ կը ջարդեն, մե՛ռնիմ էն աղի ջանին, որ ինձ նանի պտի ասի ու Սօնիս ինձանից լսի, բերանիս ազիզ թիֆէն կը տամ նրան, ջանս իրան է՛լ զուրբան՝ իր եարին է՛լ, մի էն օրը տեսնեմ ու մեռնիմ՝ դերեզմանիս վրայ օխտը թիզ մանիշակ դուս կը գայ...

Մարգարիտն աչքը սնկել էր ինքնամոռացութեան մէջ ընկղզմուած. նա մտիկ էր տալիս հեռուից իւր միտուծարին ու փառաւորուում. այս բուպէիս նա ամենաներջանիկ մայրն էր:

— Մե՛ռնիմ մարային ու ջէյրանին, ո՞վ տեսնի էն սուրահի (չողաշտֆ) բօյն ու չը դժուի:

Մայրն իրաւունք ունէր. Սօնան դործը պրծաւ և կանգնեց շնղլի վերայ. նա աչքերը դարձրեց իւր շուրջը. նրա գլուխը պարանոցի վերայ մի երկու պտոցտ արեց եթերի անհուն տարածութեան մէջ. նա ինքն էլ չէր կարող հաշիւ տալ իրեն, թէ ո՛ր է նայում, ընչի՞ է նայում:

Շատ չը տեւեց այդ դրութիւնը. նա ցած իջաւ պատից և մըտաւ խաղողի թմբերը. նա էլ չէր երևում:

Մարգարտի երևակայական ցնորքներին, նրա ուրախութեանը հեռոզհեռէ տեղի տուին կասկածանքներն ու սրտամաշ տարակուսանքները. մի ժամից աւել է Մարգարտն աչքը դարձրել է բոլոր դեղձիններին և իզուր է սպասում, թէ ահա այս ու այն ծառը կը շարժուի և դեղձերը թփիթփսլայով դետին կը թափուին. շատ չի քաշիլ՝ Սօնան դեղձը քսողակի մէջ ածած՝ ուսած՝ թմբերիցը դուրս կը գայ:

Մարգարտի ոտքերն անդիտակցաբար շարժուեցին, բայց շատ չը կարողացան յառաջ գնալ: Շուտ-շուտ ծնկները ծալուում և կանգ են առնում:

Կասկածը կռծում է մօր սիրտը, նրա մտքովը մի բան անցկացաւ և նա շտապեց դէպի շնդիլը:

— Շո՛ղն իմ գլխին, ցե՛խն իմ արևին, ես ի՞նչ կանեմ, որ մտքի՛նքս (խոսե՛ծ) ուղիղ դուս գայ, մենք աշխարհքումը թուք կըլնենք, Բարսեղն ինձ թաւէն կը դնի, կը տապակի:

Մարդարիտը վեր ելաւ չնղի վերայ: Նրա ձեռքերն ինքնին բարձրացան դէպի երեսը, եղունգների ծայրերն այտերին քսուելով՝ քնթկալի վերայով ծնօտից ցած իջան:

Այդ ամօթի ու նախատինքի նշան է:

—Քօ՛ւանամ ես, գլուխը շարժելով՝ շարունակ դեղձերին էր նայում նա. էս ո՞նց ա շարել, էս ի՞նչ օրն ա քցել, ցլխի պէս իրար վրայ թափել ա ու թողել:

—Ձէ՛, հաստատ վճռեց նա, երեխէս շիտակ փոխուել ա, նրա գլխովը մի բան ա անցկացել, հէնց է՛ն ա, որ կայ:

Մարգարիտն աչքերը դարձրեց իւրեանց հարեան Գալ — ավու-
նենց այգու կողմը և հետաքրքրութեամբ դիտում էր:

Այգու ավուովը Գալօյի կին Չարմանն էր պտտուում, ինքք՝ Գալ-
ավուն էլ նստած՝ քթոց էր գործում:

Մարգարտի կատիսածը քանի դնաց, սաստկացաւ, Սամիսոնը ոչ
մի տեղ աչքի չընկաւ:

Մարգարիտը ցած իջաւ պատից, նա գնում էր թմբերի միջով, բաց ինքն էլ չը գիտէր, թէ ո՞ւր. շատ անգամ ուզեցաւ ձայն տալ, բաց, կարծես, թէ մինը նրա շրթունքները հուփ էր տուել, լեզուն չէր շարժուում. և ի՞նչ կը համարձակէր ձայն տալ. հարեաններն ե՞րբ են նրա ձայնը լսել, որ հիմա լսեն, մի՞թէ կարելի է մի կին այնքան կորցնի իւր գլուխը, որ բաց երկնքի տակին՝ բարձրադիր այգու մէջ այնպէս խօսի, որ կողքի հարեան տղամարդը լսի. դետի-
նը վէր խորտակուի լաւ չի՞ այդպէս ալաւուղի զանջղը (քրտի վրանի
հոսից չը հետապոյ չէ՞ շոտնը):

Երկու անգամ Մարգարիտն այգու թմբերը պուլէ պուլ (Բճէեքի
ոնցքերը) ման եկաւ, բոլոր դեղձենոնց տակը տեսաւ, անցկացաւ միւս
հարեանենց կողմը, հեռուից նրանց աղջկանցն ու հարսներին էլ
անտղեց. Սօնան նրանց մէջն էլ չէր:

Մարգարիտը դողում էր, լալ էր ուզում, արտասունք չէր դալիս:

—Ձե՛մ կարծում... ո՛չ... ո՞նց կըլնի, էդպէս բան ե՞րբ ա լրս-
ուած, է՛հ... տարակուսանքների մէջ խորասուզուած՝ անկապ հարցե-
րով ուսերը յաճախ թափահարելով՝ ձեռքերով, գլխով թերահաւա-
տութեան շարժումներ անելով՝ յառաջ էր մղուում նա մի ներքին
նախազգացութիւնից դէպի մեզ ծանօթ Հնձանարագը:

Մարգարտի աչքերը մթնեցան, նրա մազերը ոգնու փշերի պէս ցցուեցան, մի ելեքորական ցնցում ամբողջ ոսկրաշարքը զրգռեց. նա վայր կընկնէր անշուշտ, եթէ մերձակայ նշենին յենարան չը հանդիսանար. նա զրկեց ծառի բունը և զլուսը դէմ տուեց փրտած փուչակին (ծառի փոս խորշ):

Անտեղի չէր երկիւղը. խեղճի կարծիքն իրականութիւն է, չը հաւատացողը թո՛ղ Մարգարտի աչքերով նայի Հնձանաբազի թեղի ծառին և որդեսէր մօրը չը մեղադրի: Տեսէ՛ք՝ ահա թեղու թփոս ճղնիկները բարձրացան և տակից կռացած դուրս եկաւ, ի՞նչ էք կարծում, ո՞վ.—մօր սրտի սիւնը՝ նրա սիրելի աղջիկը:

Սօնան ականատես եղաւ այս տեսարանին. մի վայրկեան նա կանգ առաւ, միւս ակնթարթում երկու մեծ քայլեր արեց, երևում էր, որ նա վազել էր ուզում, մօրը բռնել էր ցանկանում, բայց ոտքերն իրեն չէին հնազանդում, աջ ու ձախ կասում էին. Սօնան քարշ էր դալիս, քան թէ քայլում էր:

Վերջապէս նա մօր մօտ է, տեսնում է մօր դողոցը, տեսնում է հեծկտանքն ու արտասունքի ցած գլորուելը և չի վստահանում մօտ գալ, բռնել. նա ամօթապարտ յանցաւորի նման երկու քայլաչափ հեռու կանգնել է և իւր ոտքերի ծայրերին շարունակ նայում:

—Ա՛խ, յանկարծական սուր ճիչ դուրս թռաւ մօր կրծքից ու ոտքերը տեղն ու տեղը ծալուեցին:

Սօնան շատ լաւ հասկացաւ մօր ճշալու պատճառը. թեղու ճղքները նորից բարձրացան, ստուերի պէս մինը լոք լոք տալով աներևութացաւ թմբերի մէջ. սրաթեւ արծիւը միայն այսպէս արագ կարող էր ճղել մթնոլորտը:

—Սե սրտի աղջի՛կ, հազիւ հազ հեկեկաց Մարգարիտը:

Սօնան չոքեց մօր առաջին, նրա զլուխն ականաչից ցած գլորուեցաւ և մօր ծնկների վերայ յենուեցաւ:

—Հօրն ու մօր թքա՛նք, էս ի՞նչ սե բերիք մեր գլխին:

Սօնան միայն հեթհեթում էր: Նրա արտասունքը թրջեց մօր շրջազգեստը և ներս անցաւ:

—Էս ի՞նչ օրի հասցրիք մեզ, ա՛յ գետինը վէր խորսակուես դո՛ւ էլ՝ քո մէ՛յն էլ:

—Նա՛նի ջան, հազիւ լսելի եղաւ աղջկայ բերանից:

—Զօ՛ւ ու ցա՛ւ քեզ, որ քո ծնողի գլուխը դուս կտրեցիր. մե՛ ընէր քո ծնելու օրը, փորումս լակ ձու կտրուէի՛ր, ջուր դառնայիր՝ աշխարհք չընկնէիր, որ էս օր քո հօր անունը հողի հետ չը հաւասարացնէիր, աշխարհքի մէջ խօսելու բանատեղ չը շինէիր:

—Նանի ջան...

—Սև սրտի աղջի՛կ, թեզու տակին ի՛նչ բան ունէիր, մօ՛ մահի տարած, ընչի՞ մեր անունն աշխարհքովը մին արիք:

—Նանի՛, աչքերը շորի փեշովը սրբեց, գլուխը բարձրացրեց Սօնան, շա՛տ ուրախ եմ, որ դու ինքդ քո աչքովը տեսար ու իմացար, թէ բանն ընչու՞մն ա. երկու տարի ա ամօթը բուկս հուփ էր տալիս՝ չէի կարողանում ոտքերդ փաթաթուել, սիրտս բաց անել: Ես խօսք տուի Սամփսոնին, որ օ՛րն էս օր՝ հէնց է՛ս իրիկուն՝ մներքըս ուտեմ, սիրտս պնդացնեմ ու ամեն բան քեզ ասեմ: Հալբա՛թ, Աստուած ըսէնց էր կամեցել, հալբա՛թ, ինքը գիտէր, որ ես է՛լի սիրտ չեմ անի, է՛լի կը պապանձուեմ ու Սամփսոնին կը խաբեմ, քո սիրտդ կասկած քցեց, դէսը քաշեց, որ քո բարի աչքովն ամեն բան տեսնիս... Նանի ջա՛ն, ես Սամփսոնին սիրում եմ, երկու տարի ա, խօսք եմ տուել:

Թէ ի՛նչ խօսքեր ասաց, ի՛նչ փաստեր յառաջ բերեց՝ այդ իւրեանց գործն է, բայց մենք տեսնում ենք, որ Մարգարիտը հանդըստացաւ, նա մինչև անգամ համբուրեց իւր սիրելի դատերը: Նա անկեղծօրէն հաւատ ընծայեց իւր աղջկանն և ուրախ եղաւ, երբ իմացաւ, որ առաջին անգամն այսօր իւր սիրելին անմեղ գրկախառնութեամբ ամրացրել է սիրոյ անքակտելի շաղկապը:

—Բերանս լլկուէ՛ր, բալա ջա՛ն, ասաց նա, լեզուիս ծէրիցը թռածները ծոցս թափուին ու ո՛չ քո և ոչ քո սրտաշ (սրբակէր) ետրի քիթը չը խոռուի, որ ես քեզ զուր տեղն անիծեցի:

—Քո անէծքն ինձ ու Սամփսոնին օրհնութիւն ա, նանի ջա՛ն:

—Սրտիդ չ՛առնես, աչքե՛րիդ մեռնիմ, բե՛ր էդ փիալայ (ճրճ) աչքերդ պաշեմ. ը՛հ, մե՛ռնիմ էս կրակ կտրուած թշերին է՛լ ու սրանց դիպչող պռօշներին է՛լ, մե՛ռնիմ թագաւորի պէս փեսացուի ջանին. նանի գլուխը մա՛տաղ զնայ Սօնին ու Սամփսոնին. տես անու՞մներն էլ ի՛նչ լաւ սաղում են, փա՛ռքիդ մեռնեմ, Աստուա՛ծ:

—Բա՛ս, ատուներն (հայրենիքն) ե՛րբ կասես, նանի ջա՛ն, մօր ձեռքն անդադար համբուրելով հարցնում է Սօնան:

—Հէ՛նց էս գիշեր, հէ՛նց էս գիշեր տեղը մտաւ թէ չէ, չեմ թողալ քնի, տամարը կը մանեմ:

—Բա՛ Սամփսոնի մօրը բան չես ասի՞լ:

—Թո՛ղ Ջարմանին էլ իր տղէն ասի, աշխարհքը մեր վրայ կը ծիծաղի, թէ աղջկէքը զլինները կոխել էի՛ն, որ ինքը գնաց տղա-տիրոջ գուռը կոխեց, թէ եկէք աղջիկս ուղեցէք:

Միւս օրն երկու հարեանները—Վալ-ափունի կին Մարգարիտն ու Ալէքենց Բարսեղի կին Ջարմանը կողոց կողոցի տուած՝ երկար զրոյց էին անում. և երկուսն էլ շատ ուրախ էին:

Համաձայնութիւնն երկուսի մէջը կապացել էր: Հետեանքը մեզ յայտնի է. ծառի տակին նստած՝ մեզ իւրեանց բերանով պատմեցին Վալ-ափուն ու Բարսեղը՝ երկար ու բարակ խոստովանուելով իրարու կի՛ն արմատի մեծ աղղեցութիւնը:

Է.

Յ Ե Յ Ա Պ Ե Տ Ը.

—Բալասան աղէ՛ն, Բալասան աղէ՛ն, քշփչոցն ընկաւ Յ. գիւղը: Արդարև, հեռուից երևեցան երեք-չորս ձիաւորներ, որոնց ամենքի առաջին գալիս էր պատուական կապոյտ նժուգի վերայ վեհօրէն մի կողմի թեքուած մի հաստափոր պարոն:

Ձիաւորն իւր ուղեկիցներից երկու ձողաւփ հեռու էր գալիս, այդ նշան էր, որ հետևողները նրա սպասաւորներն էին:

Նա միջին տարիների մարդ էր, 45-ից մինչև 50 տարի կարելի էր տալ նրա հասակին՝ նայելով լացն և կոկ ածիլած երեսի թարմութեանը և գէր եզան հաստ կզակի (Լափանի հաստ մտերը) նման երեք ծալք իրար վերայ կիտուած կզակին. միայն ջինջ սպիտակ գլուխը՝ պաշտօնական նշանակը ճակատին փայլող գլխարկի տակից՝ 70 տարեկան ալևորի պատկառելի դէմք էր ընծայում նրան:

Ահա ամեն կողմից գլխարկներ բարձրացան. փողոցում քարերի վերայ շարուածները բոլորը ոտքի կանգնեցան, մինչև մեր ձիաւորը—

Բալասան աղէն հասարակութեան ողջունին կիսապաշտօնական ժպիտով առանց մի բառ արտասանելու ծոեց գլուխն և յառաջ անցաւ:

Երկար ժամանակ բազմութիւնը ոտքի վերայ էր. բաւական միջոց մի շունչ չէր լսուում քանի մի ըստէ սրանից առաջ հարայհրոցը երկինք հասցրած ամբոխի միջից:

Վաղուց Բալասան աղէն թեքուել էր դէպի նեղ խոտորավորոցը, կամ կարելի է արդէն իջել, հանգստանում էր իւր օթեւանում, բայց ժողովուրդը ոտքի վերայ սառած մնացել էր՝ բերանները կիսաբաց և երեսները թեքուած դէպի ձիաւորի անցկացած կողմը:

Օտարը կը կարծէր, թէ զիւզը առասպելական կախարդի անէծքին է ենթարկուել, կամ մի չար հրեշտակ է երևեցել ու մարդկանցը դարձրել անխօս արձաններ: Ինչպէս ասած է՝ աղօթած է չէին դառել:

Հակառակ կողմից երևեցաւ եւրոպական հին վերարկուն ծածկած մի միջահասակ մարդ:

Նա զարմացաւ ամբոխի շփոթ դրութեան վերայ: Նա կառնում էր հարցնել մի բան, բայց կանգնողներից մինը հազիւ լսելի ձայնով ասաց.

— Գնա՛, Խուղօ՛, գնա՛, Բալասան աղէն եկաւ:

— Մեր աղէ՛ն, բացականչեց Խուղօն, վաղուց:

Խուղօն էլ պատասխանի չը սպասեց, նա լերդապատառ վազեց ետևից՝ ինչպէս տիրոջը կորցրած շուն, որ հոտը կ'առնի ու առանց աջ ու ձախ նայելու մին կը վազի:

— Թո՛ւ... դուխը թափ տուեց մինը Խուղօյի քամակից և նստեց:

— Աշխարհքս էք չարխի վրայ ա պտտուում, պատասխանեց մի ուրիշը թքանք արձակողին և էլի նստեց:

Ամբոխը կամաց կամաց իւր նախկին դիրքն ստացաւ, բայց էլ առաջուան աղաղակը չը կար:

— Տեսնես ընչի՞ ա եկել, խօսեց մինը:

— Ո՞նց թէ տեսնես, տեսնելու ի՞նչ կայ, հայլու պէս պարզ ա:

— Ախար երէկ մէկէլ օրը չէ՞ր հատեղ, զատկից յետոյ չէ՞ր, որ եկաւ զատիկը պեղի պնչերիցը հանեց, շատերի ձեռը ծոցումը թողեց. տարէնը հինգ հետ հօ չե՞ն զալ:

— Մենակ մենք հօ չե՞նք, եկած կը լինի մօտիկ դեղը, մի քա-

նիսի տունը քանդած, բանը պրծած, հիսի եկել ա իր նոր մլքերին մի գլուխ քաշի:

—Տօ չէ՛, աղպէ՛ր, չէ՛, մարդը գործ ունի՝ եկել ա: Խելքներդ ջլիս կարճ ա, ո՞նց չէք հասկանում: Ղրա դալուց առաջ ի՞նչ գոր-
գոռոց էր:

—Դէ՛ գլավնի փոխելու վրայ էինք խօսում, բայց զրան ի՞նչ:

—Բաս քամակիցը վազող թաղի՞ն:

—Վա՛յ գլխիս, չըլնի՞ ուզում ա գլավնի էլ շինիլ. սուգիա շինեց՝
շատ խէր տեսա՞նք. խտակ երեխանց տակի փալասն էլ դուս կը քաշի:

—Ցե՛ց ա, որ մտել ա մեր ջանը:

—Ցեցը նա չի, ցեցը նրա ոտքերը լիզողներն են. ա՛յ մինը դա,
որ քամակիցը վազեց, ինքը որ կա՛յ ցեցերի ցեցն ա:

—Էլլիկ չէ՞ք (հոճոյն), հասարակութիւն չէ՞ք, զրան մի՛ լսէք.
զեղ կանգնի, գերան կը կոտրի, գեղովի խօսքը մին արէ՛ք, սև քցե-
ցէ՛ք, ձեր կուռն ո՞վ ա բռնում:

—Ի՞նչ հեշտացնում էս, թէ մարդ կըլնես՝ ձեռդ սև ծակին
մօտացրու, հացդ կերար, թողդ երկինք կը բարձրանայ:

—Ա՛յ մարդիկ, խօսելու բան չունի՞ք, զուք տանտէր չէ՞ք, ցաւ
ու հոգաներդ պրծել ա՞, ի՞նչ էք էզուցուան գալու բաների վրայ
գլուխ ցաւացնում. ի՞նչ Աստուած կամեցել ա, կը գայ, ուրիշ բաներ
խօսեցէք, ընդհատեց մի ծերունի ընդհանուր խօսակցութիւնը, նշա-
նացի ցոյց տալով անկիւնում կուչ եկած մի նորահաս երիտասարդի
վերայ:

Նորից խուլ լուութիւնը տիրեց, խօսողների լեզուն բունը մտաւ:

—Սա էստեղ չէր, ո՞րտեղից բուսնուեց, փսփսացին իրարու և
մէկ մէկ քաշուեցան: Հեռացողը մի արհամարհական հայեացքով ար-
տայայտում էր իւր տհաճութիւնը դէպի երիտասարդն և գնում:

—Ո՞նց հալածակուեցին, ձեր հէ՛րն անիծած, փսփսաց մարդն
և ամենքից յետոյ ինքն էլ քաշուեց:

Ը.

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.

Օ. գիւղի արեւելեան ակումբը, գիւղական տներէց 200 քաղաչափ հետու՝ ճանապարհից փոքր ինչ ծռանց՝ այսօր էլ անցորդի ուշադրութիւնը գրաւում է հողէ բարձր ցանկապատի ներսի կողմը եղած գեղեցիկ պարտէզն իւր կեդրոնումը գլուխը հպարտ բարձրացրած փառաւոր երկյարկանի շէնքովը:

ձոխ պալատը, համարձակ կարելի է այսպէս կոչել, ներքուստ և արտաքուստ ոչինչ բանով նմանութիւն չունի գիւղական շինութիւններին. նրա առաջի պարտէզը միանդամայն զանազանուում է դրացի բնակիչների պարտէզներից և այգիներից:

Մի մեծ շաղրուան՝ վճիտ ջրով լիքը՝ ծիծաղում է այցելուի երեսին և ծակում է իւր ձողաչափ բարձրութեամբ շաղ տուած ջրերի հիւլէների փալմունքով նայողի աչքերը, երբ արևի ճառագայթները հազար կտոր եղած՝ ամեն մի հիւլէն մի մի շողակնի են փոխում:

Ցանկապատի երկփեղկեաց դարվազն միշտ կողպ է. չի բացուում շաբաթներով նոյնպէս և դարվազի միջի դռնակը:

Եթէ երբեմն երբեմն մի կուացած թիկունքով ծերունի՝ արխալղի գուրչը հարիւր տեղից կարկատած՝ ամառները միշտ ոտաբորիկ, խկ ձմեռները մի ծակծկուած տրեխ ոտքերին ներս ու դուրս չանի բահն ուսին դրած՝ կարելի է ասել, որ տունը միանգամայն անմարդաբնակ է: Մերունին միակ բնակիչն է իշխանական պալատի:

— Հը՛, Թաթոս պապի՛, էս օր քէֆդ տեղն ա, աղէն եկել ա, լաւ լաւ կերակրներ կուտես:

— Ձա՛ւր գնայ ջհանդամը, ոտը կոտրի, ըսկի չը գայ:

— Ընչի՞ ես ըտէնց ասում, պապի՛, քո աղպէրն ա, ուրախ չե՞ս, որ նրա նման աղայ-աղպէր ունիս:

— Ուրախ կըլնէի, որ էս օր շնաստակ ըլնէր, իմ՝ ձեռովս նաշը (դագաղ) բռնէի, տանէի թաղէի ու յետոյ մի հողէ ենք տալացուկ Աստուծուն, տայի ու պրծն էի:

Տարին մի քանի անգամ ծերունին երկու-երեք օրով կը հեռանար իւր կացարանից:

Այդ այն օրերն էին, որ մի մեծաւոր երեք չորս սպասաւորներով կը դար, կ'իջնէր դարվազի առաջին և ծառաներին կը հրամայէր բաղխել դռնակը և դարվազէն բաց անել տալ:

Երեւի, ձիանց ոտնաձայնից արդէն ծերը ճանաչում էր եկող հիւրերին:

Նա էլ չէր սպասել տալիս դրան բաղխելուն, խոյն դռնակը բաց էր անում, դարվազի կողպէքի բանալին շարտում գետին ու ինքն առանց աջ ու ձախ նայելու՝ թողում, թոնթորալով հեռանում գէպի գիւղը:

Ահա՛ այդ օրերումն էին, որ տունը կեանք էր առնում:

Վաղուց այդ տան տեղն ազարակ էր. ծերունի Քաթոնն այն տեղ ամեն տարի համեղ դութմաներ և մեծ մեծ ձմերուկներ էր հասցնում. ազարակի զլխումը շինած մի հատիկ խրճիթումն էլ ինքն էր կենում:

Այժմ էլ այն խրճիթը կազ պալատի քամակինն Շատ աշխատեց Բալասան աղէն խրճիթն էլ քանդելու, բայց Քաթոսը ոչինչ բանով չը համաձայնեցաւ:

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ գետինը մոնելու, ասաց նա դէմ ու դէմ իւր եղբորը՝ Բալասան աղին, մեր հայրենական կաշքից էս մի քեւլովէն (աւերակ) էլ չես տալ ինձ. վե՛ր կալ, բոլորն ա՛ջքդ կոխի. թո՛ղ իմ մէկդն (գրե՛կը) էս ծածքի տակիցը դուրս գայ, վերջը էս է՛լ քեզանով Սև ծովը, ես հօ հետս չե՛մ տանելու էն աշխարհը. մեր չորս աղպորից էլ ո՞վ մնաց, ես էս ա մի ոտս գերեզմանումն ա. դու ես մընացել, մին էլ հեռու ջհանդամներումը կորած պտիկ լակոտը՝ մօրդ սիրեկան աղէն, որ էզուց-էլօր, ես գիտեմ, նա էլ քեզանից աւելի օձի կծածը պտի դուս գայ, կամ քո խաչովը պտի խաչուի խեղճ Վրթօյի պէս, որ գինովացրիր, բերանիցը թուղթ առար, թէ իր բաժինը քեզ ա ծախել ու տուն ու տեղից զրկեցիր՝ դարդամահ էլաւ, ժուռ ու մուռ նշանուած մեռաւ, նշանածն ուրիշին բաժին էլաւ: Ա՛յ մահի տարած, ասնէք ես էի խորթ, հօրից մի՛ն էինք, մօրից ջո՛կ, ջրատար Վրթօն հօ քո մօ՛րիցն էր, ի՞նչ կըլնէր՝ երկու բաղից մի կէսն էլ նա ուտէր:

Բալասան աղէն տեսաւ, որ իր մեծ եղբայրը շատ պէտք է վնթվնթաց, ամենքի մօտ իրան միշտ պէտք է դատապարտի, վրձ-

ուեց չը քանդել Քաթոսի անակը՝ միայն մի պայմանով, որ նա իւր պարտիզին ու աներին հսկողութիւն անի և պահպանի:

Քաթոսն էլ ուրախութեամբ յանձն առաւ, մանաւանդ երբ Բալասան աղէն թօյլ տուեց իրան պարտիզի միւս ծայրին մի փոքր տեղ իւր համար ազարակ անել:

Բալասան աղէն, յալանի չէ, թէ ի՛նչ նպատակաւ շինեց այս տունը. նա այդ արեց, երբ պատերազմը պրծաւ:

Բալասան աղի կենսադրութիւնը քաջ դիտեցողներն այսպէս են պատմում նրա անցեալը:

Նրա հայր քաշալ Մետրովը շատ չքաւոր է լինում: Նա մտնում է Երևանում մի մեծաւորի այգեպան և միաժամանակ այդու մէջ շինած ջրաղացին՝ ջրաղացպան Ա՛րեւի, խելացի մարդ է լինում, որ չորս-հինգ տարուց յետոյ Ս. զիւղումը գնեց երկու այգի և մի ազարակատեղ, որոնց մասին վերն քիչեցինք:

Մեծաւորը մի օր տեսել է ջրաղացումը փոքրիկ Բալային, հաւանել է նրա զեղեցկութիւնը և վերցրել է իւր առաջին փոքրաւոր:

Ի՛նչպէս է լինում, աղէն դրան զրկում է Մօսկով՝ կարգալու: Նա մի քանի տարի մնում է այնտեղ, անշնորհք է լինում, բան չի սովորում, կիսատ վերադառնում է և մտնում մի զիււանատուն՝ որպէս զբաղիր: Երկու տարուց յետոյ՝ նրա գլխումն ո՞վ է փչում, Վարշաւէ գնում, էնտեղ ձիաւոր է գրուում, էնտեղ չին է առնում և յետ դալիս: Բաղդը նրան յաջողում է, լաւ լաւ պաշտօններ է ձարում, իր մեծաւորների աչքն է մտնում, վերջը պատերազմի տարին, ի՛նչպէս է լինում, դրա ձեռքը մի տեղից մի գումար է ընկնում և դրանով դնում է իր հարստութեան սկիզբը: Ասում են, որ դրան է յանձնուած եղել պատերազմից մնասուածներին մատակարարելիք նպատոր. ամենքին լիուլի բաշխելուց յետոյ՝ իր գլուխն էլ չի մոռացել: Մեղր ծախողը մատը կը լպտտի:

Ոմանք էլ պատմում են, թէ մինչև վերոյիշեալ գումարը՝ Բալասան աղէն փող էր շինել: Նա միշտ կատարել է իւր ծառայութեան մէջ նշանաւոր պաշտօններ: Նոյն իսկ իւր պաշտօնակիցները յաճախ ծրարներում դրած դրամական նուէրներ են ուղարկել նրան, մի տեսակ բարեկամական կապ պահելու իւրեանց ազդեցիկ ընկերի հետ: Մի յիմարը միայն չի ուզեցել ճանաչել Բալասան աղայի

առաւելութիւնը. վերջը շատ էլ զղջացել է, գլխին վա՛յ է տուել, բայց շատ ուշ. այսօր քաղցած փորով, պալտօյի բամբակները կախկախոտուած՝ քարշ է գալիս զինետների առաջին, երեխայքն էլ թափառաշրջիկ մուրացկաններ են դարձել:

Ամենից խելօք վարուել է մի գործավարի օգնական: Դիւանատան ատենադպիրը հիւանդ է լինում, նրա տկարութիւնը երկարատեւ բնաւորութիւն է ունենում, բժշկները նրա վերջը մահ են գուշակում. մինչ ամենքն ստամբները սրած սպասում էին և կողմնակի կերպով էլ աշխատում էին, թէ ե՛րբ պէտք է մեռնի ատենադպիրը, որ ձեռք բերին բարձր պաշտօնը՝ մեր գործավարի օգնականը լուռ ու մունջ գնում է նստարիուսի մօտ և այսպիսի մի մուրհակ վաւերացնել տալիս, իբր թէ ինքը պարտ է Վլադիմիր Նետտորիչ Մեյնիկովին հինգ հարիւր մանէթ՝ երեք ամիս ժամանակով, մէջն էլ զբաւական է նշանակում իւր այգին:

Նրա քաղղից ատենադպիրը մեռնում է նոյն օրը, երբ լրանում է ժամանակամիջոցը:

Գնում է նա մուրհակը ծրարի մէջ մի ուրիշ թղթի հետ, թէ ըստ որում չ'ունիմ միջոց վճարելու, ինքնայօժար փոխարէնը պատրաստ եմ ձեռք քաշել այգուցս: Դի հարկէ, մի փոքրիկ տոմսակով Բալասան աղայի հովանաւորութիւնն է խնդրում:

Հինգ օր չի անցնում, գործավարի օգնականը, որ միւռնոյն է թէ մի զբաղիր, ստանում է ատենադպրութիւն:

Այսօր խելացի պարոնը և՛ լաւ հաց ունի և բարձր պաշտօն. շա՛տ մօտ բարեկամ է մեր Բալասան աղին և օրհնում է Մեյնիկովի կեանքը:

Մենք մոռացանք ասել, որ Բալասան աղայի անունը քաղաքավարի լեզուով Վլադիմիր Նետտորիչ Մեյնիկով է: Բաւական մեծ վիճաբանութեան առիթ է տուել նրա անուանափոխութիւնը. մի մասնաժողով է կազմուել դրա մասին. Բալասան՝ կամ զիւղական կոչումով Բալօ՝ Վալօղի խօսքին մօտ է եղել. ինչպէս յայտնի է՝ Վալօղին Վլադիմիր բառի փաղաքշական կրճատումն է. այդ հեշտ են գտել. դժուարութիւն չեն կրել և ազգանուն որոշելու ժամանակ. նրա հայրը ջրաղացպան էր և այգեպան. մասնաժողովի անդամներից մինը ցանկացել է բարդ ազգանուն կազմել՝ Ս ա դ ո վ ն ի կ ո վ — Մ ե լ

նիկոզկոչումով, բայց մեծամասնութիւնը հակուել է առաւելութիւն տալ հօր ջրադացպատնութեանը, մանաւանդ որ կարճ և քաղցր է «Մեւնիկոզ» խօսքը: Ինքը Բալասան աղէն էլ շատ սիրել է այդ բառը: Մեծ տարակուսութիւն է յառաջ եկել Մերսովբ բառը փոխելիս՝ Մօյսէյ, Մինայ, Մեդվեդ, Միտրօֆան, Միֆօդի և ուրիշ շատ Մ. տառով անուններ շարել են, երբ տեսել են որ ո՛չ մինը չի սազում, ընտրում են Ն-ով Նեստոր անունը: Մէկը միայն հակառակել է, ասելով՝ թէ Նեստորը վիրաւորական է, նա եկեղեցու հակառակ հերձուածող է եղել, բայց ինքը Բալասան աղէն ասել է, որ եկեղեցուն նշանակութիւն չը պէտք է տալ, Նեստորը խելօք մարդ է եղել և այդ իր համար սիրելի է, ուստի և վճիռ են կայացրել՝ Բալասան աղին մեծաբանել Վլադիմիր Նեստորիչ Մեւնիկոզ պատուանունով: Իւր ցանկութեան համաձայն, այսպէս էլ կօչուած է նա իւր ծառայութեան ցուցակի մէջ:



ԳԻՒՂԵՐՆ ԷՒ ԵՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԵԼ.

Երեկոյ է. վերոյիշեալ պալատի վերնայարկի պատուհանները լուսաւորուած են. վերնայարկումը ոչ ոք չը կայ, մի փոքրիկ սենեկում միայն, մահճակալի վերայ, խալաթը հազին, նստած է ճաղատ ճակատը բաց մէկը. նա քրքրում է սեղանի վերայ դրուած պայուսակը: Նա հանեց մի կապոց մուրհակներ և սկսեց մի առ մի թերթել: — Այս մէկ. սա մեզ շատ հարկաւոր է, աստմնաւոր կծան շուն է, պէտք է ժանիքը փշրտել, ժամանակն էլ լրացել է:

Նա յետ դարսեց մուրհակը:

— Այս երկու, ձեռք առաւ նա մի ուրիշ թուղթ. սա ծակերում հաչացող է, կծել չի կարող: Այս երեք. հերիք է սրան տոկոսից մի շնչին բան կտորել և ահա իւր հարազատ եղբօր տակը կը փորի: Այս չո՛րս, հինգ, վեց, եօթը, շուտ շուտ մուրհակների տէրերի անունները կարդալով՝ ինքնազոհ ժպիտն երեսին մի կողմն էր յետ դնում նա. սրանք բոլորն էլ իմ գործիս ու նպատակներիս կը գան, բաւական է միայն իմ կողմից մի թեթեւ հրաման: Է՛հ, ի՞նչ

եմ երկարացնում, նորից խառնեց նա մուրհամների ծալքը, ողջ գիւղն իմ ստրուկն է և դեռ երկմտում եմ: Կեռ մի դրամագլուխը հաշուեմ, տեսնենք ո՛րքան կը լինի, ասաց նա և համբիշը վերցրեց, մէկ մէկ քցեց:

— 55000 մանէթ, օ՛հ, բարձրաձայն կանչեց նա, էս գլուխը, իսկ եթէ տոկոսը, տոկոսի տոկոսը վրան գալու լինինք, ո՛ւր կերթայ, 70000-ից կ'անցնի... Ո՞վ է, ձայն տուեց Բալասան աղէն գրսի սե- նեկի հազոցին:

— Ե՛ս եմ, աղայ ջա՛ն:

— Դու ե՞ս, Խուդօ՛, նե՛րս արի:

Խուդօն խոնարհ գլուխ իջեցրեց, ձեռքերը սրտին խաչած կանգնեց:

Մեզ անծանօթ չէ Խուդօն. սա այն մի հատիկ գիւղացին էր, որ մէջ մտաւ Մելիք-Բաղալի աճուրդի ժամանակ և էլի շուտ փախաւ. մենք չենք նկարագրիլ սրան, շատ չի քաշիլ ինքն իրան գըլուխը ցոյց կը տայ. այսքանը միայն իմանանք, որ Բալասան աղայի ընդհանուր կառավարիչն էր Ս. գիւղում և առաջին հաւատարիմը:

— Ի՛նչ եղան, հարցրեց աղան:

— Մի երկուսն եկել են, գլխիդ զուրբան, բայց մնացողները հէնց իմանաս փախու են տալիս. Մելիք-Բաղալը, սաքի թէ, գլխացաւ ա բունել, տեղն ա մտել քնել, ոնց որ տեսնում եմ՝ աղուէսաստեկ ա տուել. մինը հանդն ա գնացել, մէկէլը ջուր ա ջրում, Աագարն էլ ասում էր՝ թէ թուրքերը նախրիցը մեր կովը քշել տարել են, մաշաղի Նասիր-Բէգին երեք մանէթ եմ խոտացել, գնացել ա տեղն արել, գնում ենք յետ բերելու. իմ կարճ խելքովն ամենքն էլ մհա- նէք են սարքած, դրանք պտի հաւաքուած ըլնին Մելիք-Բաղալի տանը, դուռը ծածկած՝ Արտօյի համար քար հաւաքելու պատրաստութիւնումն ըլնին, չեն ուզում դալ:

— Տօ՛ գիժ ես, ի՛նչ է, անդէ՛տ հայկան, ձողու պէս բարձրացել ես, տարին 12 ամիս զօրութիւնս տեսնում ես, գիտես, որ թրիս երկու կողմն էլ կտրում է ու էլի դուրս ես տալիս, թէ չեն ուզում գալ՝ ի՛նչ կը համարձակուեն, թող մի չը գան՝ տեսնեն:

— Աղա՛յ ջան, որ Արտօյի քարը դուս գայ, ի՛նչ կ'անենք, էդ թղթերի կէսը ջուր կը դառնայ: Խուդօն գլխով ցոյց տուեց սեղանի

վերայ դիզուած մուրհակները. համա դու ինձ գլազնի շինի, տես ո՞նց եմ տարին չը բոլորած՝ շղղկան մանէթներն առաջիդ կիտում. տես հինգ, տասը մանէթով ո՞նց եմ քեզ հազարներ աժող բաղերի ու մինն հարիր արդում (աբրիւնի) տուող հողերի տէր շինում, հօ՛ գիտես, որ ձեռիցս կը գայ:

— Դէ՛, ձայնդ քե՛զ քաշիր, կո՛վ, դու էլ կարծում ես, թէ քո շնորհքն է, որ այսօր մարդամէջ ես խառնուել՝ ճուպտում ես, սո յիմա՛ր, ես որ Ալդալովին չը խնդրէի, քեզ ձիաւոր չը դըրել տայի, վերջը գեմնի ստրաժի ուրեաղնիկ չանել տայի, քեզ ո՞վ շան տեղ կը քցէր, տ՛օ, ասում են՝ ձի թիմարելու շընորհք էլ չես ունեցել. տասն անգամ ուրեաղնիկդ զանգատուել է Ալդալովին, թէ ձեռքիցդ ոչինչ շնորհք չի դուս գալիս, բայց նա հրամայել է իմ խաթեր պահել. տօ՛, եթէ ես ամեն բանում քեզ չը հովանաւորէի, հացի տէր չանէի, դու հիմի ո՞րտեղ կը լինէիր, քեզ ո՞վ սուղիա կը շինէր. կո՛րի աչքիցս, յիմա՛ր ապերախտ, լոյսը չը բացուած՝ իմ փողերս բե՛ր, որ հինգ տարի է առանց շահի վրադ տնքում է, ես կարող եմ առանց քեզ իմ պարտքերս հաւաքել. բաւական է, որ Արտօյին կանչել տամ, երես տամ՝ դրանս շունը կը դառնայ, իսկ եթէ էգուց մէքերդ ծախել տամ, փողս վերցնեմ, դու քաղցածութիւնից ճաշին կը քնես:

Խուղօն տեղն ու տեղը չը քցեց:

— Ես գլուխս քարովը տուի, ոտներիդ մեռնիմ, քո մի բայի գլխովը պտիտ տուր ինձ ու աչքդ վրիցս մի՛ հեռացնիլ, ես քեզ բարկացնելու մտքով չ՛աւեցի, խօսք էր՝ լեզուիս տակից փախաւ. ողջ գեղն ու մ՛հալն ա վկայ, որ ես, իմ կնիկը, իմ երեխէքը, տունս, տեղս, քո ծոխանքաջրովն (ամոն չուսպած ջուր) ենք ապրում, քո թիկունքովն ենք մարդամիջի մարդ, թէ չէ ես ո՞վ, Խուղօ բէզն ո՞վ է:

— Զօ հիմի հասկանո՞ւմ ես:

— Զանս էլ չի դուս գալի՞ս, ինձ ոչ ով գգիր՝ չէր շինիլ, ոչ թէ սուղիա ու էգուց՝ գլազնի:

— Ադա՛, ա՛յ գլխամեռ, իրա՛ւ, ի՞նչպէս ես դատաւորութիւն անում, ախար դու գիր չը գիտես, ժպիտն երեսն առած՝ քաղցրացաւ աղան:

— Տօ՛, գլխիդ արևիդ մատա՛ղ, ո՞վ ա բան հասկանում, որ ես

Հասկանամ, սաքի, հողի ունիմ տալացող, տեղն եկած վախտը մարդ պտի ճշմարիտն ասի, մեր էս ողջ մ'հալումը նոր օրէնքները հասկացող զլազնի միայն Արտօն էր, որ կար, որ վեց ամսից զգուացրինք թոցրինք, թէ չէ ի՞նչ դատաստան, ի՞նչ կարգ ու կանոն, մե՛նակ պիտըլն ա խզմզում ու սուղիէքս էլ՝ ձեռք գիտեցողը ձեռք ա քաշում, դալամ չիմացողի տեղակ էլ յետ ինքը պիտըլը գրում ա ու տալն աւելացնում, թէ չգիր ոչ գիտենալով՝ ինդրանօք գրեցի և վկայ եմ: Հէնց էս դրսի ֆօրմերն են, թէ չէ էլ յետ վաղուցուան տանուտէրութիւնն ա, դատաստանն օր յառաջ տանուտէրն իր քուրսու տակին ա տեսած ըլնում ու փողերը ջէքն ածում, մենք էլ մի դհիցն ենք մեզ համար ճանգում ու ծծում: Նորը հնից ընդով ա ջոկ, որ յառաջ ուտողը մին էր, հիմի՛ մի քանիսը:

— Եդ թո՛ղ, եկողներն ո՞վ են:

— Դարբնեց Մատօն ու փոշմանեց Սարօն:

— Փողերը բերել ե՞ն:

— Դեռ, աղայ ջա՛ն, փողի վրայ խօսք մի՛ քցիլ:

— Յետոյ դրանց ձեռքներիցը բան զալիս է՞:

— Ո՞նց չէ, աղայ ջա՛ն, մինն էս օր զլազնու կանդիտատ ա, մէկն էլ ամբարդար ու ըսպօրչիկ՝ սաքի թէ խարջ հաւաքող, երկուսի դուռն էլ մեղրի միջին թաղուած ա. մեր զլազնին Սարօյի հետ չէ՛ որ իր կանդիտատն ա, համա Մատօյի հետ մին են, ամբարի ցորենը քամուն են տուել պրծել, հաւերի կուտ էլ չի մնացել. երկու շաքաթ ամեն զիշեր դուս էին տալի, էշակու քարվանով զըրկուս Երևանայ բաղարը ծախում, վերջը մի զիշեր էլ տան ծածկը քանդեցին թափեցին ու ախտ (ակո) գրեցին, թէ ամբարը քանդուեց, ցորենը հողի հետ խառնուեց, խարջ հաւաքելուս էլ խարջի չափ մասրաֆ (գի-դամելի եղած ներսին ծախ) են քցում ու հաւաքում, իրար հետ լափում. քա՛նդել են գեղը, քա՛նդել:

— Լա՛ւ, լա՛ւ, կանչի՛ր ներս գան:

— Հա՛, աղայ ջա՛ն, լաւ միտս եկաւ, եախէս ազատի մեր լափտի ձեռիցը:

— Ի՞նչ լափտ, Խուրօ՛:

— Իմ շան տղի՛ մեր երեխի՛ քեզ ծառայ կարօյի. զլուստ տանում ա, թէ Ալէքեանց Բարսեղի աղջիկն ինձ համար ուղի:

—Տօ՛, գետինը մտնես, ես էդ լսել եմ, դու էդ ի՞նչ գլուխդ քարոզիս ես տալիս, ուզում ես քեռուդ թոռն ուզիլ տղիդ. բաս դու Աստուածանից չե՞ս վախում, գլխիդ կրակ կը թափի երկնքից: Դու հիմի սուտ չես հաչում, թէ Կարապետն է զօռ անում, հիմի քո միտքդ չէ՞ Բարսեղի կայքին տիրանալ, արի ուղիղն ասա՛:

—Քո ոտն իմ գլխիցը շատ զիտի, է՛ն ա հասկացել ես. մեր պապի յետ քցածը քանց Աետրոսենց Գալօն տանի ուտի ուշունց տայ, հազիր մենք ուտենք, ողորմի տա՛նք:

—Աղա՛, էդ ո՞ր ճանապարհովն ես ուզում անիլ:

—Քո սաչովն (օֆնո-Վեածի՛), իմ գլխի տէ՛ր ու տիրական ջան:

—Ա՛յ անհողի, մի տես ի՞նչքան չըհաս է, մէջն արիւն է լսաղում:

—Է՛հ, աղայ ջա՛ն, քո ձեռին չի՞, արիւնն էլ կը ցամաքացնես, չըհասն էլ հաս կանես:

—Քանի՞ պորտն է:

—Պորտի ու փորի հետ ի՞նչ բան ունիս, աղայ ջա՛ն, սուտ չը կայ՝ հալալ քեռուս թոռն ա՛ որ ուզում եմ իմ Կարօյին:

—Աղջիկը շատ է սիրո՞ւն, որ տղէդ գժուել է վերան:

—Քո մեղաց պարտական ըլիմ, թէ աչքս աչքին առած ըլնի, կամ Կարօյի մոքովն անց կացած ըլնի. մլքերի համար եմ ուզում:

—Ասում են, աչքի մէկը կոյր է, տնա՛քանդ, հեզնեց Բալասան աղան:

—Տօ՛, թո՛ղ քաշալ էլ ըլնի, գլխիդ մեռնիմ, իր բաղերի թփերիցը կը քաղենք՝ գլուխը կը ծածկենք, իր հաւողի պտղները աչքը կը դնենք՝ պիպիկ (ՔէՔ) կը շինենք. երեք էնպէս բաղ ունի, մի քանի էն տեսակ բարելի հողեր ունի, որ օխտը ձեռնանի աղպօր պէս ամեն վախտ նեղութիւնիդ կը հասնեն:

—Ա՛յ գետինը մտած, ախար Գալ-ափունի տղէն մեղք ա, ասում են՝ երկու տարի ա իրար սիրել են, ասում են՝ հաստատ խօսք են տուել-առել, էքուց-էլօր նշան պէտք է դնեն:

—Է՛հ, աղայ ջա՛ն, էն վաղ էր, որ նշանն ու հաստատ խօսքն անց էր կենում, հիմի պսակուած կնիկն էլ, ասում են, մարդին չի հաւանում՝ թողում ա գնում ուրիշի կողքը տաքացնում. հիմի, ասում են, աշխարհքը լուսաւորուել ա, զեղերն ընչի՞ չը պո՛ի լուսաւորուեն:

— Բաս մեղք չի՞:

— Մեղքն ու վարձքը ձեր չինովնիկներինցն ու գիտուններիցը հարցրո՛ւ. ասում են՝ հիմի էս աս դուս գնում. տեսար մին կնկայ աչքումն եղ կայ՝ ուժումդ կայ, գլխին բամբաչի՛, ձեռիցը խլի՛:

— Է՛, շատ լաւ, ասենք թէ հոգիներս մի քիչ ժամանակ սւենք, բանը գլուխ բերենք, ես ընչո՞վ պէտք է հոգուս ճանապարհը մաքրեմ, չէ՞ որ այս մեղքը քաւել կուզի, ժամ-պատարազի խաչհամբոյք է պէտք, ո՛րտեղից:

— Քո գագաթը ո՞ղջ կենայ, քիչ կա՞յ. տեսնում ես պատի Մասիսը՝ Խուղօն ժպտալով աչքով ցոյց տուեց մուրհակի կոյտը:

— Ա՛յ անպիտան, աղա՛, դու բոլորովին մուճտախոտ (չքեպէր) ես եղել, դեռ տանուտէր չես դառել, աչքդ ուրիշի դրանն է:

— Ընչի՞, քեզ մատա՛ղ, երեք տարի աս սուղիա չե՞մ:

— Ուրեմն շատ կաշառք ես կերել:

— Քո գլխովն եմ երդում ուտում, անհատնում աղբիւր աս, որ լիովի խմում ենք ու քեզ կեանք ու արև խնդրում:

— Զէ՛, Խուղօ՛, չէ՛, լուրջ դէմք առաւ Բալասան աղէն, շատ դժուար գործ է այդ, մինչև դորձակալին ու վանքումը բան կը հասկացնեմ, մինչև ճանապարհը կը գտնենք, հոգեհան կը լինենք, ի հարկէ մէջտեղը փող կը խաղայ, առանց դրան չի լինիլ, այդ ամենն իւր կարգին դու կը քաշես. բայց պէտք է ինձ հաստատ խօսք տաս, որ պսակուելուց յետոյ Բարսեղի վերի բաղն ինձ տաս:

— Ողջ տուն ու տեղս քոնն աս, աղայ ջա՛ն, բայց ես Բարսեղին ո՞նց խօսք հասկացնեմ. նա քանի կենդանի աս, մեզ մի չոփ չի տալ, որ աչքներս կոխենք:

— Դու էս օրուանից ինձ խօսք տո՛ւր, մնացածն իմ վզին:

Ինչպէս երևում է, Խուղօյին շատ հաճոյ չեղաւ իւր պաշտպանի առաջարկութիւնը. նա հաստատ գիտէր, որ Բալասան աղան այս անգամ կատակ չի անում. այն էլ իրան քաջ յայտնի էր, որ աղայի համար դժուար չէր ամեն ճանապարհ հարթել. խեղճն ստիպուեց ծործորակը քորելով կամաց քրթմնչիւնով արտասանել.

— Քո ցաւը տանի, աղայ ջա՛ն, էնքան ըլի դու բանը գլուխ բերես, Կարօյիս գլուխը մեղրի պուլկումը թաղես, էն մի բաղն էլ:

քո գառը բալուկին՝ պստիկ աղին. Զալարու հաւողն ա՛ դո՛ւ էլ կեր՝ մե՛նք էլ:

— Որ այդպէս է, զնա՛ ներս բեր այն պարոններին:

Ժ.

ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ԻՒՐԵԱՆՑ ԽՈՆԱՐՀ ԵՂԵՆ ՅՈՅԺ.

Վսեմ քաջուածքով, ձեռքերը խալաթի զրպանը զրած՝ չափում էր Բալասան աղան սենեկի յատակը, երբ դուռը բացուեց և Խուղօջի առաջնորդութեամբ շարուեցին իւր առաջին երեք հոգի և բարի գալուստ մաղթեցին նրան:

— Յօ՛, դու է՛լ, սուղիա Դաւիթ, մեր Խուղօն քեզ համար բան չասա՛ց:

— Ես նոր եկայ, աղայ ջա՛ն:

— Էլ ի՞նչ փորացաւանք ունիս:

— Դեռ սրանց հրամանք արա՛, յետոյ կը խօսենք:

— Սրանց ի՞նչ ունիմ ասելու, ես չեմ կանչել. մեր Խուղօն եկաւ ասեց, որ ուզում են ինձ տեսնել. ի հարկէ պէտք է գալին, իրանք իրանց պարտականութիւնը գիտեն. Մատօյի պարտքի ժամանակը մի շաբաթ է լրացել է, Սարօյինն էլ՝ երկու օր կայ. շնորհակալ եմ, գիտեն, որ ինձ փող է հարկաւոր, բերել են. սպասէ՛ք մուրհակը հանեմ:

Աղան ձեռքը ծոցը տարաւ և մի քանի թղթեր հանելով՝ սկսեց քրքրել:

— Նեղութիւն մի՛ քաշիլ, աղայ ջա՛ն, միաբերան խօսքը դուրս թռաւ երկուսի լեզուի տակից, մենք պատրաստութիւնով չենք եկել, սուղիա Խուղօն մեզ կանչեց:

— Թէ չէ գալու չէ՞իք:

— Պէտք ա ժամանակ տաս, աղայ ջա՛ն, թուղթը նորենք:

— Բերան չը բաց անէք, Նեսկօն մեռնի, թէ սուտ եմ ասում, մինչև վիզս թաղուած եմ:

— Խնդրում ենք՝ կենտ երկու ամիս, բամբակը զնումն ա՛ չանաքենք, չղրխենք մաշխումը, ծախենք, մեր հոգու պարտքը տանք:

—Մի օր չեմ կարող համբերիլ, պէտք է, Նեսիօյիս արևն եմ տսում, տանը հաց չը կայ, երեկայ ծախելու տարի ա:

—Յարասները զինով լիքն են, քնջիթը դայինխանումն (շրթափի չիւտհան) ընկած ա, հերթ չը կայ, խալվարներով չայթուկին էլ տեղ չը կայ, բաց սր ոչ հանած ա և ոչ զին ա գնում, ժամանակ տուր, կիսագնի ջուրը չը ցնենք:

—Մա՛րդ էք՝ հասկացէ՛ք, զրպանումն մսխելու կոպէկ չը կայ: ռոճկիս արտն էն գլխիցն եմ հնձել, կնկանս շոր չունի, ինձ փող է հարկաւոր, էգո՛ւց ևեթ, դրա համար եմ բանից, զործից աւարայ եղել, եկել. ես հօ՛ ձեղ պէս անգործ մարդ չեմ, մի օր եթէ զուլուղի գործն յետ թողամ՝ տնով-տեղով սիբիրական կըլնիմ:

—Ի՛նչ անգործ մարդիկ ես գտել, աղա՛յ, ասաց տանուտէրի կանգիտատ Սարօն, զարունքը գալիս ա՝ մատներիս միսն ուտում ենք, գիշեր-ցերեկ տնորդովի շան նման տանջուում ենք, հետն էլ գեղամիջին հասարակութիւնի ցաւն ենք քաշում, խախալի (ցրթնի ճող) գլուխը մի բան չենք քցում, էլի՛՛ երեխէքը տկոր, էլի՛՛ մի կտոր ցամաք հացի կարօտ. դէ՛, ո՛ւր ա գնում մեր աշխատանքը, ի հարկէ՛, քո հրամանոց քիսէն ա մտնում. գլուխս քարովը տուի, ասացի՝ իմ պապի արհեստը թողամ, սովդաքեարութիւն անեմ, եկայ քեզանից 150 մանէթ վեր կալայ. էս ա հինգ տարի ա, հինգ էնքան տուել եմ, դեռ 500 մանէթ էլ կայ. էլ ի՞նչ ես ուզում, աղայ ջա՛ն, խալխը գնում են, բաղ են տնկում, հողագործութիւնի մէջ կեանք ու արև են մաշում, տաւար, ոչխար են պահում, արևի տակին, սարերի թմբին գող ու աւազակի, գէլ ու զազանի հետ են կռուում, թէ ի՞նչ ա՝ մի կտոր ցամաք հաց գտնեն իրանց երեխէքանց համար. դու քո հրամանքդ ամառը եայլազների (աճարանոց) հովերումը, ձմեռը գոգռան (բորթոտած) բուխարու կողքին՝ կակուղ բարձի վրայ թիւնին ես տալիս, էլ գեղըցու վրայ միտք էլ չես ցաւացնում, հիմի էլ եկել ես, երկու ոտներս մի մաշիկ դնում (սփիթել), բողազներիս չոքել ես, թէ տուէք. հէ՛ր օրհնած, մեզանից էլ լաւ կթի կովե՞ր, ոչխար չենք, բաս ի՞նչ Աստու կրակ ենք, բուրգներս խուզի, մլքիդ եկամուտը անքրտնիլ, անհնձիլ տուն ածա՛, պատրաստ բրդած կերակրի գլխին նստի ու Աստուն փա՛ռք տուր:

—Ի՛է՛, անպիտան փուչ, յանկարծ կրակ կորուեց աղան և ինչ-

պէս թնդանօթի պաշթիւն, տունը ցրեց իւր խրոխտ ձայնով, ո՛ւմ գլխին ես զայլի աւետարաններ կարդում, ո՛ւմ հետ ես կաստամանին քցել (խօսուցել), քաղցր զրոյցներ ու կծու շանդիմանութիւններ անում. МУЖИКЪ ТЫ ЭТАКИЙ, նո՛ր ես իմանում, որ տանապատիկը կը ստանամ, քեզ համա՛ր եմ դուր քրտինք թափել. քամակիցդ վառած մեղրամոմե՛ր ուղարկեցի, եկաց ո՛տքդ, խնդրեցի որ զաս ինձանից փո՛ղ տանես. հէնց գիտէիր, թէ փողը ցանա՛ծ է. դու ժամանակին բերիր պարտքդ տուիր՝ ես չը վերցրի՞. կորի՛ աչս բուպէին, իմ փողերս բեր, թէ չէ էդուց վիզդ պարան կը քցեմ, սուղի՛ դուռը քաշ կը տամ, շո՛ւտ, ասում եմ:

—Բաշխի՛, աղաց ջա՛ն, հանաք էի անում, ես չ՛ասեցի, որ նեղանաս:

—Ձա՛յնդ, անտաշ անպիտա՛ն, ո՛ւմ հետ ես հանաք անում, ես քո հանաքաքնկե՛րն եմ, չափդ ճանաչի՛ր, տես ո՛ւմ հետ ես խօսում, մոռժի՛կ գիւղացի, սկատի՛նա, անասո՛ւն. չորացի՛ առաջիս, ուղիղ կանգնի՛ր, սմի՛րնօ՛, պօղլե՛ց, սվի՛նի ա՛, բերդումը կը փտացնեմ քեզ, դու չինոպնիկի հետ հանաքներ ես անում հա՛, երես տուի՛ աստառ է՛լ ուզեցիր:

—Գլուխը քա՛րը տուեց, գլխի՛դ մեռնեմ, մէջ մտաւ սուղիա Դաւիթը:

—Մեր գլապնու կանդիտատ Սարօն լաւ մարդ ա, աղաց ջա՛ն, ների՛ր, դա միշտ իր գլուխը քեզ համար յետ դրած ունի, յառաջ եկաւ Խուղօն, ինքը մի քիչ հանաքչի ա. մեզ որ ասում ա՛ ծիծաղում ենք, հէնց իմանում ա, թէ ամենքին էլ մի զազով կը չափեն, դէ՛, էշ գեղըցի ա, ի՛նչ ա իմանում, թէ մոռժիկն ո՛վ ա, չինոպնիկըն ով:

—Ձոքի՛, Սարօ՛, չոքի՛ ոտը պաշի՛ր, կուռը բռնեց ու կռացրեց Դաւիթը, մեր աղէն ա, թո՛ղ իր քաղցր բալին բաշխի:

Խեղճ Սարօն ծնկների վերայ եկաւ և լուռ գլուխը ծռել էր:

—Յետոյ փողերս ե՛րբ պէտք է տաս:

—Մի երկու ամսից, աղաց ջա՛ն, կը վերջացնեմ:

—Տօ՛ վերկա՛ց, ա՛յ տխմար, նորից քաղցրացաւ. Բալասան աղան, դու որ քո անգէտ գիւղացու թիւնովդ հանաք գիտես, բաս մեծաւորներս չը գիտե՛նք. տեսա՛ր, ո՛նց փորդ կատու քցեցի, չէ՞ որ ես

էլ քեզ էի փորձում, հա՛, հա՛, հա՛. ա՛յ չիմար, քեզանից ո՞վ ա փող ուզում:

— Կատուի՛ն խաղ ա՛ մկանը մահա. լեղիս ջուր շինեցիր, գլխիդ մատա՛ղ, ախար ես էլ զարմացայ, էնպէս բան չ՛ստեցի, որ սըրտիդ դիպչի, կմկմաց Սարօն:

— Դու էլ սրա պէս է՞լի, Մատո՛, թուղթը նո՞րում ես:

— Հա՛, աղայ ջա՛ն, ժամանակ տո՛ւր:

— Աչքի՛ս վրայ, էգուց դնացէք երկուսդ էլ մուրհակներ գրել տուէք, շոտ առաջին պահանջման, գլափնու փէչադը թէկուզ չը լինի էլ, փնաս չ՛ունի, բայց դնել տուէք. եթէ գիւղումը վէքսիլի թուղթ չը ճարուի, ինձ մօտ կայ, երեկ կօզնաչէյը տուեց՝ թէ քեզ մօտ շատ եկողներ են լինում՝ ծախի՛ր, խազնին փող ա պէտք:

— Մի՞թէ խազնէն էլ կարիք ունի, աղայ ջա՛ն, հարցրեց Խուզօն:

— Տաւա՛ր անասուն, թագաւորի խազնին պրծնում կա՞յ, կօզնաչէյը մեզ՝ իր բարեկամներին տալիս է, որ ամեն մի թղթի դնից մի մի ապասի աւել առնենք, իր համար շայ-շաքարի փող դուս դայ. դէ խազնումը որ ծախուի, նշանակած դնից աւել չի կարող առնել:

— Հա՛...

Բալասան աղէն պօրտօքէյը վերցրեց, հանեց ծալքերից մի կապ վէքսիլի թուղթ, ջոկեց երկուսը և տուեց Խուզօյին:

— Ահա՛, սրանց կը տաս, թո՛ղ գրել տան, նշանակած գներիցն էլ հինգ հինգ շահի աւել կառնես, կը բերես:

— Մի շահին էլ ճուտեր հանե՞ց, աղայ ջա՛ն, ծիծաղելով ասաց սուղիա Դաւիթը:

— Ա՛յ անհասկացող, անունդ դրել ես դատաւոր ու գլուխդ քարից պինդ է, բաս ես նեղութիւն չեմ քաշել, շալակել հետս բերե՞լ, էն էլ իմ ոտքի վարձն է:

— Մեր գիւղի դուքանները լիքն են, աղայ ջա՛ն, նրանք ամեն մի թղթից երկու շահի են աւել առնում:

— Դէ՛ նրանք հասարակ դուքանչիք են, նրանց ծախսը քիչ է, հինգ կոպէկն էլ բաւական է, բայց դու արի՛ ու մեր մեծաւորներիս ծախսին դիմացի, Աստուած վկայ եմ ասում, մինուճար նեւկօս մեռնի, թէ խօքումս ստութիւն կայ, հայ էք՝ հաւատացե՛ք, ծախսի ձեռ-

քից գլուխ չենք թափում, գիտէ՞ք ինչ թանգութիւն ա, երեկայ ծախելու տարի ա, Նեսկօն մեռնի, թէ սուտ է:

—Հեռի՛ բեղանից, աղայ ջա՛ն, հաւատում ենք, հօ թուրք չե՞նք:

—Ռէ էլ հօ բան չունի՞ք ասելու. գնացէ՛ք, ըստ առաջին պահանջմանը չը մոռանաք, հիմի նոր օրէնք է դուրս եկել, էլ ժամանակ նշանակել չը կայ:

—Աղայ ջա՛ն, թո՛ղ երեք ամսով զոնէ գրուի, վա՛յ թէ շատ նեղութիւն քաշենք:

—Ա՛յ տղէք, էլի քիչ մնաց բարկութիւնս բերում էիք, սօ՛, ձեզանից ո՞վ է փող ուղում, պահեցէ՛ք՝ ինչքան ձեր սիրտը կ'ուզի:

—Ե՛, խնամի Դաւիթ, դո՛ւ ինչ զուլուղ, կամ աղդ կը լինի պակաս, կամ մաղդ է՛լի:

—Քեզ յայտնի ա, աղայ ջա՛ն, որ իննը տարի ա՛ ես սուղիի կանգիտատ եմ. որ սուղիէն դատարան չի գալիս, ինձ են քաշ տալիս նստացնում. աշխարհքը չնի ու մենծութիւնի տէր դառան, ես մի մեղալի կտոր էլ ա չունիմ, բաս իմ պատուին ամօթ չի՞. ի՞նչ կըլնի խնամքդ բաց անես, ինձ համար մի մեղալ բերել տաս, ե՛ս էլ քաշ անեմ, էլ շատ ա սիրտս ուղում:

—Հէնց էդքանը՞. օրն էգո՛ւց:

—Ղո՛րթ, աղայ ջա՛ն:

—Նեսկօն մեռնի, թէ սուտ եմ ասում:

—Վա՛յ, ես քո ոտքերին զուրբան գնամ:

—Տօ վատը դո՛ւք էք, դո՛ւք, ա՛յ անաղուհաց քրդի շներ, ես միշտ ձեր քամակին մեծ Մասսի պէս կանգնած եմ, բայց դուք չէք հասկանում. ձեզ լաւ յայտնի է, որ էս ուէզդումը գեղ չը կայ, որ ինձ պարտ չըլնեն—Վաղարշապատ, Աշտարակ, Եղվարդ, Փարբի, Բիրական, Շարուր, Դարալագեազ բոլոր իմ ճորտերս են. քաղաքումը բանկերն են ինձ պարտ, գիտէ՞ք բանկն ի՞նչ ա. բայց ի՞նչ ձեր յիմար խելքի բանն է, էդ թող, սուլթաններն ու խաներն են բռումս. դրանք ամենն իր կարգին, ես միայն իմ գիւղն եմ սիրում, ընչի՞—որովհետեւ մարդիս համար իրանը միշտ քաղցր է, իմ պորտս էս գեղումն է կտրուել, իմ ծնած տեղն է, իմ հող ու ջուրն է, ինձ համար ձեր մի մաղը ուրիշի գլխից բարձր է, ինչ ցաւ ունիք՝ ասացէ՛ք, իմ սիրտս կը պատուուի, որ բաց աչքով տեսնեմ իմ

գեղացու նեղութիւնն ու չօգնեմ. որտեղ նստում եմ՝ ձեր վերայ եմ խօսում, մեր մեծաւորների հետ ճաշի վրայ ձեր կենացն եմ խմում:

— Աստուած կեանքդ երկար անի, աղայ ջա՛ն, ի հարկէ որ մեր պարծանքն ես, համա մի խնդիր էլ ունիմ, աղայ ջա՛ն, շողոքորթ հանդիսխօսութեամբ ասաց Դաւիթը:

— Ասա՛, մի՛ վախիլ:

— Մի քիչ փող էլ ա պէտք, մի 150 մանէթի ձեռ բռնի:

— Ա՛ռ վէքսիլի թուղթը, էգուց գրել սուր՝ բե՛ր:

— Տարով եմ ուզում, աղայ ջա՛ն:

— Վնաս չ՛ունի, դու մի տարուայ շահն էս գլխից հաշուիր թումանին մի ապասով, գրի՛ր ըստ առաջին պահանջման, մինչև տարին քեզանից փող ուզող չը կայ:

— Էն ա դուզ տարի գրենք էլի՛:

— Զի՛ կարելի, օրէնքը թոյլ չի տալիս:

— Էդ օրէնքն ամենքի համար ա՞, աղայ ջա՛ն:

— Ո՛չ, միայն մեծաւորների պատիւն է այս:

— Քո կամքն ա:

— Նստեցէ՛ք, տղէ՛ք, կանգնած ոտքներս սև ջուր վէր եկաւ:

— Դէ գնանք, աղայ ջա՛ն, էլ քեզ ի՞նչ նեղութիւն տանք, ասացին ամենքն և գլուխ իջեցրին:

— Ի՛նչ անշորհք մարդիկ էք, ա՛յ մոժիկներ, վեց ամիս կայ՝ գիւղը չեմ եկել, մէկդ չէք հարցնում. հիմի էլ եկաք, ձեր գործը հոգացիք ու ձեռաց գնում էք. նստեցէ՛ք, քիչ զրոյց տանք, ասուլիս անենք: Աղա՛ Խուռօ, էն շկափը բաց արա՛, արաղի բուժիլը բեր, էլի ես ձեզ պատուեմ, թէ չէ ձեզանում քաղաքավարութիւն չը կայ:

Ամենքը նստեցան և մի մի կթղայ օղիով օրհնեցին Բալասան աղայի կեանքը:

— Տե՛ս էդ տեղ ի՛նչ միրգ կայ, բեր թո՛ղ բերանները քաղցրացնեն, հրամայեց աղան և Խուռօն մի քանի խնձոր յառաջ բերեց:

— Բե՛ր, ա՛յ որդի, բե՛ր, մոժիկից շնորհքը վերացել է, բաղբի, բօստանների, չալթուկի, շիրբախտի, լաւ մրգերի տէրերն իրանք են՝ ես եմ դրանց համեցէք անում. ասենք՝ էս մեր Խուռօյի կինն էր ուղարկել, անփող է, բայց մեր տան վերջին չփն էլ փողով է ներս գալիս, ո՛չ մի բարեկամ, ծանօթ, ազգական, գիւղացի, ընկեր միտք

չ'արեց՝ թէ տարուայ իւր բերքի ժամանակ՝ քչից շատից՝ ինձ համար բաժին ուղարկի. ձեզանից ի՞նչ կը պակասի, որ ամեն մէկը իր ունեցած զինուց, արաղից, մրգից, բրնձից, լաւ ձաւարացու սպիտակահատ ցորնից իմ բաժինը հանէք, նրանով հօ քանդուիլ չէ՞ք. աղքատ էք՝ հարստանալ չէք, հարուստ էք՝ աղքատանալ չէք, սուտ եմ ասո՞ւմ, տղէ՛ք:

—Մեզ համար շատ ամօթ ա, աղայ ջա՛ն, լաւ ես հրամանք անում, կրկին դէմքը ծռեց Դաւիթը, մեր ա՛ջքի վրայ:

—Արաղը քո շէնքին՝ Մատո՛, ես եկող շաբաթ մեծ ճաշ ունիմ, մի մեծաւոր ինձ դեպե՜շ է տուել, որ մի օր ճաշին ինձ մօտ պէտք է լինի, երկու լիտր արաղ կերթայ, էդ թող քո պարտքը լինի, միւսներդ էլ ձեր մէջ հաշուեցէք՝ թէ էն օրուան տանձ ու ինձորը ո՞րդ էք բերում, միւս բաներն էլ ուրիշների վզին կը բարձենք:

—Քո ցաւը տանի մի տիկ արաղն, աղայ ջա՛ն, բայց աչքս էլ որ հանես, ճշմարիտը պէտք ա սսեմ, մի՞տդ ա, հերու, որ քեզ համար երկու լիտր մեղր բերի լսից սիպտակ:

—Հա՛, հօր հոգու չէր, չհասի համար էր:

—Ինչ կուզի ըլնի, մին ա. բանն էս ա, որ հրամանքդ բալկոնի վրայ կանգնած էիր ու քո բարի աչքովդ տեսար, որ քո ծառէն աշխանէդ էլ չը թողեց ինձ, բակի դռնիցը լետ դարձրեց: Քեզ շիտակն ասեմ, աղա՛յ, սրտիս շատ դիպաւ:

—Յետոյ ես բալկոնումը միայն էի ու քեզ վերև չը կանչեցի՞, հետդ չը խօսեցա՞յ:

—Ձէ՛, մօտդ մի ուրիշ աղայ էլ կար:

—Ես էլ հէնց դրա համար չը կանչեցի է՛, բաս դու չը գիտե՞ս, որ ինձ անպատուութիւն էր ուրիշ անձանօթ մեծաւորի մօտ մոտօրկի հետ կանգնել մասլահաթներ անել. ի՞նչ անենք, թէ ծանօթ բարեկամ ես, իմ հարազատ եղբայրն էլ որ գալիս է, էլի իմ սենեակը չի մոնում, նրա տեղը կուխնին է, որ կայ. ողորմածիկ հէրս էլ որ կենդանի լինէր, վերև չէի թողնիլ. ի՞նչ կասէին ինձ իմ ընկերները, ձեզ եմ հարցնում, չէի՞ն ասիլ, թէ սա ի՞նչ մարդ է, որ իր հայրը սա է: Ախա՛ր դուք չը գիտէք, մի անգամ քիչ ֆնաց երկրիս մէջ թքանք էի դառնում. լուսահոգի մայրս մի ձմեռ իւր

սունն այստեղ թողած՝ եկել է, թէ ուզում եմ ձմեռը քեզ մօտ անցկացնել, միսից ձանձրացել եմ, ասում է՝ հազում եմ, ծերացել եմ, էլ չեմ կարողանում դիմանալ, որպէս թէ նրա պորտը ծխի միջին չի կտրուել: Ինչ և իցէ, մի սենեակ յատկացրի իրեն, որ այնտեղ վեր ու նիստ անի մեր տղաուաւ քօծի հետ, իւր համար ուտի, խմի, քնի, հանգստանայ: Դու մի՛ ասիլ, դա խիստ նեղացել է, որ մեզ հետ սեղան չենք նստացնում, քօծի հետ ենք ճաշ տալիս. դէ գիւղացի մուժիկի պառաւ կին է, նրան ի՞նչ վայել էր գլխարաց հասկացող հարսի հետ ձգուել: Սա մտքումը խէթը պահում է: Մէկ օր մեզ մօտ քսանից աւելի խանութներ են հաւաքուած՝ լօտօ են խաղում, միւս կողմումն էլ սեղանը սարքած է քաղցրեղէնները շարած՝ որ լօտօյից յետոյ վեր կենան անուշ անեն: Հէնց լօտօյի տաք ժամանակը, յանկարծ իմ խաչտառակչի մայրս գլուխը փալասներով փաթաթած՝ ճղճղոտուած շորով, բորիկ ոտներին հին շտերը (ճաճակ) ծլմփացնելով՝ տուն է գալիս, բար՛ իրիկուն ասում ու մօտենում կարգով բոլորին ձեռք տալիս:

— Ղօչա՛ղ, քեռակի՛ն, հաւանեց Մատօն:

— Էլ ի՞նչ ղօչաղ, հիւրերի մէջ փսփսոցն ընկնում է, իրարու աչքով են անում և քթի տակին ծիծաղում:

— Նանի՛, ո՞ր տեղացի ես, հարցնում է խանութներից մէկը:

— Հէնց էստեղից եմ որ կամ, ծանրազոզոթ ս ու ը բ ո գ ն ի ասում է մայրս, ես ղաղէ՛ն (ճապող), էս տան մեծն եմ, Բալօյիս մէրն եմ, սա էլ իմ յարգեւոր հարսն ա, դուք էլ իմ աղիղ աչքի լիս ղոնաղներն էք, համեցէ՛ք քաղցրեղէն անուշ արէք:

Հիմա դուք իմ խեղճ կնոջ դրութիւնը հարցրէք, աչքերը սեւնում է, քիչ է մնում սիրտը թուլանայ, բայց որ խելօք է, կարողանում է իրեն զսպել. էն կողմիցը զօքանչս վեր է կենում, թէ՛ աղջկէ՛ք, զորթ է ասում խնամիս, հերիք է ինչ խաղացիք, համեցէ՛ք միրգ անուշ արէ՛ք:

Ամենքը վեր են կենում, լօտօն քանդուում է:

Երկու ամիս տներումն էլ ուրիշ խօսակցութիւն չը կար, մենք էինք բերանների ծամոնը:

— Հալթա՛թ դու էլ ընդուր համար յետ ղրկեցիր ողորմածիկ մօրդ, աղայ ջա՛ն, ասաց Մատօն. լուսահոգին շատ էր տրտնջում՝

ջանս քանդեցի, սև օրով մեծացրի, բերանիս թիքէն կորեցի, մարդ շինեցի, ասում էր, որ էս օր ինձ մարդատեղ չը քցի՞:

—Ա՛յ եղբայր, էլ ի՞նչ կարող էի անել, ձեռքիցս եկածն անում էի, երկու տարէնը մի շալ շոր էի կարել տալի, բայց նա գոհ չէր՝ տարին մէկ շոր էր ուզում, գլխի շալ, սաղրի մաշկներ, կարմիր դանառ, դօշով շապիկ, դալամքեար արխալուղ էր պահանջում, ախար ես ընչի՞ տէր էի, միլիոններ հօ չունեմ՞: Նեսկօն մեռնի թէ սուտ եմ ասում, առած ամսական ծայրէ ծայր չի հասնում, պարտքով ենք ապրում, դէ հօ չե՞մ կարող այս մի քանի շահին ջուր շինել: Հլա փա՛նք Աստուծոյ, մեռաւ, պրծաւ, ականջներս հանգստացան:

—Դէ՛, բարի գիշեր, աղա՛յ, ասացին ամենքն և վեր կացան: Խուղօն սաստիկ անհանգստացաւ:

—Ի՞նչ էք շտապում, Դաւի՛թ, դեռ նստեցէք մի քիչ հանաքներ անենք, մօրս անունը միտքս եկաւ, սիրտս նեղացաւ:

Նոքա նորից նստեցին:

—Է՛, ասա՛, Սարօ՛, ի՞նչ կայ ձեր գիւղումը, ի՞նչ չը կայ, բերքն ի՞նչպէս է էս տարի:

—Փա՛նք Բարերարին, իրա տուածից ամեն ինչ առատ ա:

—Գիւղն էլ հանգստութի՞ւնն է, տանուտէրներդ լա՞ւ է կառավարում. դա մի կողմով չեղաւ, թէ տեսնենք դու ի՞նչ շնորհքի տէր ես. ուրիշ կանդիտատներ բաղդաւոր են եղել. Պօղոսը, մի տարի չը քաշեց, իր տանուտէրը պօղսուղի (քննու-նեռն) տակ ընկաւ, տեղը տիրապետեց. Մարկոսն աւելի բաղդաւոր էր, Ղամէքը մեռաւ, տեղն իրան մնաց, բայց էդ քո պնդերես Կարապետը ոչ այն աշխարհն է գնում և ոչ գործի մէջ է ընկնում. ինչպէս ես նկատում եմ, դու մինչև նոր ընտրութիւնը կանդիտատ էլ մնալու ես:

—Էս ա մեր պոչն էլ կը խուզեն էլի՛, ասաց սուղիա Մատօն:

—Ի՞նչպէս:

—Ժամանակը լրացել ա, նաչալնիկն ապսպարել ա, որ երկ՝ օրից Զիթահանքումը հաւաքուինք, քար քցենք, գլաջնի ու սուղիէք ընտրենք:

—Հա՞, զարմացական դէմք առաւ Բալասան աղան, մէկէլ օրը ես նաչալնիկի մօտ էի, բան չասա՞ց. սխալ կը լինիս, ա՛յ տղայ, կարծեմ դեռ մի տարի կայ:

—Ձէ՛, աղայ ջա՛ն, թուղթն արդէն եկել ա, հինգշաբթի բիբօր (քնորուակեան) ա:

—Յետոյ ձեզանից ո՞րդ էք գլազնի դառնում, ո՞րդ սուղիէք:

—Ո՛չ մինս, ոչ մէկէլս, ասաց Դաւիթը, ջահէլ-ջուհուներն են հիմի ատամները սրել, հիմի նրանք են գեղի քէթխուղէքը, մեր ըռխին մտիկ սուտղ չը կայ:

—Մեղաւորը հայրերդ էք, ընչի՞ էք ձեր որդւոցն էդքան իրաւունք սուել, ընչի՞ մի քանիսին հասարակական վճիռ չէք շինում՝ Սիրիր քշել տալիս:

—Ո՛ւմ քշենք, աղա՛յ, մինն իմ տղէն ա, մինը քո, մինը սրահօրոգօր թոռն ա, մէկէլը մի իշխանի քուեր որդին ա, ամեն մէկին ինձ պէս, քեզ պէս օխտը պաշտպան ունի, ոչ դու կը թողաս, ոչ ես, էնպէս ա՞, թէ ոչ, Խուզօ՛:

—Դուք էլ այնպէս բան արէք, որ աչքները վախենայ. վերցրէք մի քանի խեղճ, անտէր աղքատի տղայ գեղից դուրս արէք, թո՛ղ ձերոնք տեսնեն ու օրինակ առնին:

—Ո՞նց, արդարը մեղաւորի տեղակ կորցնենք:

—Որպէս թէ ագուաները սե կը հազնեն, եթէ տասը չքաւոր ոչնչանան. միշտ այդպէս է, թոյլը զօրեղի համար է ստեղծուած, արջը գայլին է խեղդում, գայլը՝ ոչխարին, աղուէսը՝ հաւին, կատուն՝ մկանը. ե՞րբ ես լսել, որ մուկը կատուին յաղթի. աշխարհքս էդպէս եկել է, էդպէս էլ շարունակուելու է; խրատում էր Բալասան աղէն. ինձանից ձեզ խորհուրդ, ձեռքդ ընկաւ, տեսար որ քեզանից անուժ է՝ փշրի՛, ոչնչացրո՛ւ, մէջտեղից քո օգուտը հանի՛ր:

—Բա՛ս մեղք ու վարձք չը կա՛յ, հարցրեց Սարօն:

—Մեղքն ու վարձքը տէրտէրների սարքած թօռն ա, որ ձկան պէս քեզ մէջը քցի, կալնի ու իր համար կեր հանի, շատ էլ լաւ են միտք արել, բաս նրանք ապրելու չե՞ն. բայց էս թողնենք, խօսքը փոխեց Բալասան աղան, հիմի մտքներդ ի՞նչ է, ո՛ւմն էք ուզում տանուաէր դնել:

—Գեղը ողջ կաննել ա, էլ չետ Արտօյին են ուզում, ասաց Սարօն:

—Արտօն էստեղ է՞:

—Ոչ, աղա՛յ, Նախուանի կողմը զազախներին գարի ա պահ տալիս, ինքն էլ իսկի չի ուզում, բայց գեղը նոր ա հասկացել, որ էս

նոր սուղերի սարքուած օրից իրանք մի տանուտէր են տեսել՝ էդ էլ Արտօն էր, որ միայն վեց ամիս համ տուեց ու վերջն իր պատուիցը վախեցած՝ թողեց քաշուեց:

— Լաւ էր կառավարում հա՛:

— Ա՛խ, մեր զեղն էն օրն էր բաղդաւոր, զառն ու գէլն իրար հետ արածում էին:

— Դէ որ հղպէս է, հիմի էլ Արտօյին ընտրեցէք էլի՛:

— Գլխներին վրայ կ'ընտրենք, աղայ ջա՛ն, թէ որ համաձայնի. ասում են թուղթ ա գրել, չի ուզում, ասում են՝ ամիսը հարիւր մանէթ փող ա առնում:

— Հա՛, հա՛, հա՛, բարձրաձայն քրքիւր երկար ծոր էր տալիս բարձի վերայ յետ գնացած Բալասան աղէն, հա՛, հա՛, հա՛, Գոմշակերենց Արտօն տանուտէրութիւնից փախչում է, միամիտ մուժիկներ, դուք էլ հալած իւղի տեղ էք առնում էդ խօսքերը. հարիւր մանէթ, սօ յիմարնե՛ր, ես լաւ գիտե՛մ, թէ դուք՝ հինգ օր չը կայ, Արտօյի խազէյինը ինձ մօտ ճաշի էր, մի ամիս ա, որ գողութիւնը բռնել ա ու քո Արտօյին քաղցած փորով դուս շարտել, դեռ ուզեցել է պօղտուղի տակ ձգի, բայց նա շան պէս ոտքերն է ընկել, լիզել, ինքն էլ խղճացել է: Տօ՛, դուք հէնց գիտէք Արտօն հիմի էլ էն է՞. գողերի թագաւորն է, գիւղը տալն ու վրայ կ'անի, մօր ծիծ կը կարի. պէտք է ասած՝ այն ժամանակ էլ նոյնն էր, բայց մաշեննիկ էր, իր տեղն էր ուզում տաքացնի, որ յետոյ ձեզ տղրուկի նըման ծծի, բայց խոփը շուտ քարին առաւ:

— Ո՞վ նրա իշին չօշ ասեց, աղա ջա՛ն, ինչքան էլ աղաչեցինք, պռնկոտացինք, չէլաւ, թողեց հեռացաւ:

— Դուք հղպէս կարծեցէք, բայց եթէ չէր հեռացել՝ հիմի կատրըժնիկ կը լինէր, թո՛ղ գնաց ինձ կեանք ու արև խնդրի, որ աչքով արի, մաշեննիկը դուս պրծաւ:

— Նա ի՞նչ էր արել, աղայ ջա՛ն:

— Բաս էն ոչինչ է՞ր, որ օրական նա մի մարդից երեք մանէթ շտրաֆ էր խլում, բաս էն ոչի՞նչ, որ մեծ ու փոքր չը հարցրած՝ բանտ էր դնում, էն ոչի՞նչ՝ որ ինքնազլուխ սրա նրա տանից պըղինձը դուս էր քաշում, տօրգ անում, ինքը ծախում, ինքն առնում. չէ՞ որ իրաւունք չ'ունէր: Զայնը տեղ հասաւ, ըեվիզօրը պատրաստ

էր, միւս օրը պէտք է գար սելսկի սուղը (գիւղական դադարան) պե-
չատէր (կիւիւ), քո Արտօյիդ հրաժարականը հէնց էն օրը տեղ հա-
սաւ: Եօթը ժամ լեզու եմ թափել նաչալնիկին, որ հրաժարականը
նոյն օրը հասցրել է, թէ չէ գնացել էր քո Արտօդ,—պօղլե՛ց, բաղ-
բօ՛յնիկ, դող, աւազակը:

—Դէ լաւ, աղա՛յ, մեր կարճ խելքովը մի լաւ մարդ Արտօն էր,
նա էլ որ մաշեննիկ դուս եկաւ, էլ ո՛ւմ ընտրենք, հարցրեց Սարօն:

—Տ՛օ լիմար, լաւ մարդս ո՛րն ա, վատը որը, ամենքդ էլ մի
սանտրի կտաւ էք, ընչի՞, դու չե՞ս կարող լինել, սա չի՞ կարող,
նա չի՞ կարող. ահա մեր Խուղօն, դուք հօ լաւ գիտէք, որ գեաղի
մինն էր, աչքումս լաւ խաղաց, յառաջ քաշեցի, մարդամէջ հանե-
ցի և էս օր Օ. գիւղի պէս տեղի սուղիէն է, իշխանն է. պակաս
մարդ է՛, ձեզ եմ հարցնում:

Մատօն ու Սարօն միմեանց նշանացի ակնարկներ արին, կար-
ծես թէ գլխի ընկան:

—Ի՞նչ էք լռել, կրկին հարց տուեց Բալասան աղան, մեր
Խուղօյին որ տանուտէր շինենք, չի՞ կարող գլուխ տանել:

Մատօն ու Սարօն տարակուսական ուսաշարժութիւն արին:

—Դու ի՞նչ ես կարծում, խնա՛մի Դաւիթ, դարձաւ աղան դէպի
վերջինս:

—Մեր կարճ խելքովն Արտօն լաւ էր, բայց որ քո օրհնած
բերանով հրամանք արիր, ես ի՞նչ իրաւունք ունիմ:

—Դուք եկէք ինձ լսեցէ՛ք, ի՛նչ ասեմ՝ կատարեցէ՛ք, թէ ձեր
գիւղը դրախտ չը դառնայ՝ ինձ հայհոյեցէք:

—Լաւ ասողի ջանին էլ կը մեռնենք:

—Ողորմի՛ ձեր հօրը. այ՛ ձեզ գլաջնիացու մեր Խուղօն, ես
սրան եմ կամք տալիս, դուք էլ ինձ օգնեցէք, քարը դուրս բերէք,
ձեր երեքին էլ սուղիա շինել կը տամ՝ ինչ պակասութիւն որ ձեր
գիւղին գայ՝ մեղքն իմ վրին:

—Դժուար թէ գեղը Խուղօյին կամք տայ, աղայ ջա՛ն:

—Ընչի՞:

—Էս գլխամեռը աղքատ-ուղքուտի տունը քանդեց, աղայ ջա՛ն,
ասաց Սարօն, մի շահով կաշառք էր ուտում. էդ գլուխը քարը,
բայց որ քո հրամանոց սանաղները շուտ շուտ էր մէջ բերում, վրձ-

ուում ու խեղճերի էլած չէլածը ծախում. ողջ գեղը հետը թշնամացել ա:

—Այ տղայ, ուրեմն աշխարհքս առ ու կուլ է՞, հիմա դուք վիղներդ եօթը գազ կախել էք՝ փող էք ուզում, Աստուած կը վերցնի՞, որ տանէք և ժամանակին չը տաք:

—Լա՛ւ ես ասում, աղայ ջա՛ն, բայց անխղճմտանքութիւնն էլ բանի պէտք չի. սա շահը շահին կոխացնում ա, մի ծակ կապէկ չի բաշխում, հասարակութիւնի տունն էլ քանդուում ա, մի քի՛չ եօլա գնալ ա հարկաւոր:

—Նա՛տ լաւ, եկէ՛ք ձեր հետ մի պայման կապենք, Նեակոյին թաղեմ, թէ սուտ ասեմ. դուք ինձ օգնեցէք՝ Խուղոյին տանուտեր շինենք, քանի սա նստած ա, գիւղիցը մի կոպէկ չը պահանջեմ. համաձայն է՞ք:

—Սաքի, աղա՛յ, սա ըն՛ի՞ ա տաք տաք կպել, չը գիտի՞ որ իր գործը չի:

—Սա չի կպել, ե՛ս եմ ուզում, ես հէնց կ'անեմ, որ սա Արտոյին ձեր մտքիցը կը ձգի, ի՛նչ էք ասում, իմ խաթե՛ր: Երեքն էլ լուել էին:

—Դէ՛ վեր կացէք դուրս կորէք, ապերախտ անպիտաններ, գոչեց յանկարծ տեղիցը վեր թռչելով Բալասան աղէն. մուժիկի որդի՛ մուժիկներ, ես էլ ձեզ մարդատեղ դրի, եղբոր նման հետներդ քաղցըր խօսք ու զրոյցներ արի, դուք էլ զլխիս էք ուզում նստել, մա՛րջ, դո՛ւրս. այդ երկուսդ լոյսը չը բացուած՝ փողերս բերէք, դու էլ, Դաւիթ, որտեղ փողը շաղ են տալիս, էնտեղից վերցրո՛ւ, ով որ էլ քեզ համար ազնուութեան մեղալ բերել կը տայ, նրա՛ն դիմիր, երեք օրից կը պարզուի, թէ ո՞վ է տանուտերը, տեսէք՝ սկատին ա (անտոտան) Գոմշակերի թոռի օրը ի՛նչպէս կը սևանայ. դո՛ւրս, շո՛ւտ, կո՛րէք փողերս բերէք:

—Մի՛ բարկանալ, աղայ ջա՛ն, ասաց Դաւիթը աչքով անելով միւսներին, թէ որ քո կամքդ ա Խուղոյին զլաջի շինել, մեր ա՛չքի վրայ, էգուց ևեթ գեղը շուռ տանք:

—Ի՛նչ կ'ասեմ օրինաւոր խօսքին, ես էլ ձեր երեքին էլ սրան թե ու թիկունք շինեմ, դատաւոր ընտրեմ, լոյսը բացուի թէ չէ, որքան փող, Դաւիթ, կամենաս, առաջիդ համարեմ, սորանց էլ եթէ էլի պէտք է, թո՛ղ վերցնեն, տոպրակի բերանը բաց է:

Կարելի է խօսակցութիւնը դեռ երկար տևէր, եթէ դրսի սե-
նեկից ոտնաձայնը մի ուրիշ անձնաւորութեան ներկայութիւնը չը
ծանուցանէր:

Խուղօն դուրս գնաց և շուտ վերադարձաւ. նրա ակնարկը ա-
ղային շատ բան ասաց:

— Դէ՛, տղա՛յք, ձե՛զ տեսնեմ, իմ աջ կուռն էք, էլ ձեր առա-
ջին փակ դուռը չի լինիլ, երեքդ էլ այսօրուանից սուղիա էք՝ որ
կաք, Դաւիթն էլ սուղիայի մեղալի մօտ մի դեղին պօլիմպերիալի
չափ ագնուութիւնի մեղալ կրծքին է կախում:

— Բարի գիշե՛ր:

— Հօ չը տեսա՛ն Վանեցուն, հարցրեց աղան Խուղօյից նոցա
գնալուց յետոյ:

— Ո՛չ, աչքով արի, մտաւ ծալքատեղը:

— Լա՛ւ ես արել, նե՛րս կանչիր:

Ներս եկողը մի նիհար, ծաղկատար երեսով, բարձրահասակ,
կապտազոյն եւրոպական կիշամաշ սերթուկը սև արխալուղի վերայ
հագած, մուճակները ոտքերին երիտասարդ էր:

Նա գիւղական զրազիրն էր:

(Կը շարունակւի)